

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2016 թ.

N 99-Ա.

բ. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ  
ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի \_\_\_ \_\_\_ դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 900-Ն որոշման 15-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *ն ր ն Ե ու մ է*.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների 2016 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ

#### 1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Պետական անտառային ֆոնդում 2016 թվականի անտառային միջոցառումների իրականացման նպատակն է պետական անտառային ֆոնդի տարածքներում 2013 և 2014 թվականներին հիմնված համապատասխանաբար 15 հեկտար և 1.2 հեկտար անտառատնկարկների պահպանության և դիմադրության բարձրացման, բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով իրականացնել անտառատնկարկների խնամք:

#### 2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կբարելավվի անտառների որակական կազմը, կբարձրացվի արտադրականությունը և կավելացվի բնափայտի պաշարները:

#### 3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում 2016 թվականի անտառային միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից կհատկացվի՝ 6 623 000 (վեց միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) դրամ, որից՝

1) անտառատնկարկների խնամքի իրականացման համար՝ 1 623 000 (մեկ միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) դրամ.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում 2015 թվականին իրականացված անտառային միջոցառումների դիմաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից կհատկացվի՝ 5 000 000 (հինգ միլիոն) դրամ, որից՝

ա. անտառապատման միջոցառումների համար՝ 724 500 (յոթ հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) դրամ,

բ. բնափայտի բնական աճի աջակցման միջոցառումների համար՝ 504 100 (հինգ հարյուր չորս հազար հարյուր) դրամ,

գ. անտառաշինական նախագծերի մշակման միջոցառումների համար՝ 3 771 400 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր) դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**